

ՀՀ Վայոց ձորի մարզպետը մասնակցել է <<Աջակցություն Հայաստանում ժողովրդավար կառավարմանը>> ծրագրի պաշտոնական մեկնարկին

03.06.2014



Մ/թ հունիսի 3-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանը մասնակցել է <<Աջակցություն Հայաստանում ժողովրդավար կառավարմանը>> ծրագրի պաշտոնական մեկնարկին, որը տեղի է ունեցել Արմենիա Մարիոթ հյուրանոցի Արարատ սրահում: Միջոցառման ողջույնի խոսքով հանդես են եկել Բրիտանական խորհրդի հայաստանյան մասնաճյուղի տնօրեն Արևիկ Սարիբեկյանը, Հայաստանում Եվրոպական Միության պատվիրակության դեսպան Տրայան Հրիստեան, ՀՀ արդարադատության նախարար Հովհաննես Մանուկյանը:

Ծրագիրն իրականացնում է Բրիտանական խորհուրդը, գործընկերներ՝ Քաղաքացիական զարգացման և համագործակցության հիմնադրամ, Գրանթ Թորնթոն և Թոմսոն հիմնադրամ: Ծրագիրը ֆինասավորում է Եվրոպական Միությունը:

Ծրագրի նպատակն է ժողովրդավարական հաստատությունների, քաղաքացիական հասարակության և ԵՄ-Հայաստան հարաբերությունների վերաբերյալ Հայաստանի բնակչության իրազեկվածության մակարդակի բարձրացման միջոցով խթանել Հայաստանի Եվրոպական Միության հետ մերձեցման գործընթացը և նպաստել ժողովրդավարության ու արդյունավետ կառավարման ամրապնդմանը:

18 ամիս տևողությամբ և 949 670 եվրո բյուջեով ծրագիրը կիրականացվի Երևանում և ՀՀ 5 մարզերում՝ Գեղարքունիկում, Լոռիում, Սյունիքում, Վայոց ձորում, Տավուշում: